միւս նորագոյն գրողների՝ Մաքսիմ Գորկու և Լ. Անդրէևի հետ։ Ի պատիւ Կորոլէնկոի յուլիսի 14 ին Պ. Բուրդում տեղի է ունեցել մի մեծ հացկերոյթ, ուր ներկայ են եղել աւելի քան 450 հոգի։ Հացկերոյթը պատրաստուած էր 12 պարբերական հրատարակութիւնների նախաձեռնութեամբ և մասնակցում էին ռուս նոր գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներ, խմբագիրներ, պրոֆէսսորներ, բանաստեղծներ, գրադէտներ և այլն։ Հանդէսի ժամանակ կարդացուել են բազմաթիւ ուղերձներ, որոնց մէջ նաև Պ. Բուրդի համալսարանի ուսանողներից, Մոսկուայի 1250 ուսանողներից, Մոսկուայի դպրոցական 850 սաներից և բազմաթիւ խմբագրութիւններից, հասատատութիւններից, խմբերից և անձերից և վերջապէս հրէայ ուսանողներից։

Երկու ժողովրդական գրողների հրատարակութիւնները տպուած են ռուսերէն բազմաթիւ տպագրութիւններով, իսկ նոցա գեղեցիկ վէպերից ու պատկերներից շատերը թարգմանուած են հայերէն և մեծ մասամբ տպուած «Լումայի» էջերում։

—

ՏՆՍՑԻՆ ԲԺՇԿԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս օրերս լոյս տեսաւ բժշկապետ Գ. Բաբեանի խմբագրութեամբ հրատարակուող բժշկարանի երկրորդ ստուար հատորը՝ Գիւտ ա. քահ. Աղանեանի և պ. Իսահակ Ցարութիւնեանցի թարգմանութեամբ։

Այդ հատորը պարունակում է իւր մէջ վարակիչ, ներքին, կաշուի և վենէրային հիւանդութիւնները, ականջի դեղարան և բժշկական բառարան։ Գրքին կցուած է մալեարիան տարածող մոծակի զանազան ձևերի նկարը։

—

ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԳՐՉԱԳԻՐՆԵՐԸ ՎԱՃԱՌՈՒՆԵ

Մասնաւոր հայ անհատներին պատկանող ձեռագիր ժողովածուներից ամենահարուստը պ. Աւետիք Էնֆիաճեանցինն է, որ յիսուն երկար տարիներ գրավաճառի խանութ ունենալով Թիֆլիսում՝ միջոց է ունեցել հետզհետէ ի մի ժողովել իւր ձեռքն անցած հայ գրչագիրները։ Շատ հայ և նոյն իսկ եւրոպացի բանասէրներ ծանօթ են այդ թանկագին հաւաքածոյին։

Որքան մեզ յայտնի է, այդ ձեռագիրները գնել ցանկանում էին բազմաթիւ հայ հաստատութիւններ և մասնաւոր մարդիկ։ Սակայն, ինչպէս այժմ հաղորդում են մեզ ամենահաստատ աղբիւրներից պր. Ֆինկը ամսոյս 4 ին հաղորդել է իրան Էնֆիաճեանցին, որ Տիւբինգէնի համալսարանի մա-